# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am


N 17
*06 փետրվար 2017թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2017թվականի հունվար ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ս.Մարկոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 01

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով.

Որոշում եմ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի կողմից վիճ. ծառայություն ներկայացվող բոլոր տեսակի հաշվառումների և հաշվետվությունների ներկայացման համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հաշվառման աշխատանքներին մասնակից դարձնել նաև համապատասխան ծառա-յությունների մանագետների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017թ. փետրվարի 6-ին

գ.Գայ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի

2017 թվականի հունվարի 9-ի թիվ 1որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի նախագահ- Խ.Քոչարյան

(համայնքի ղեկավարի տեղակալ)

Հանձնաժողովի անդամ– Ա.Թադևոսյան

(աշխատակազմի քարտուղար)

Հանձնաժողովի անդամ - Ա.Իսջիրույան

(առաջին կարգի մասնագետ)

Հանձնաժողովի անդամ - Ս.Կոստանյան

(գործավարուհի)

Հանձնաժողովի անդամ - Վ.Վարդանյան

(անասնաբույժ)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2

## ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թվականի հունիսի 17-ի 22-Ն որոշմամբ, 2017թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրություններին նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 17 թ. փետրվարի 6-ին
գ.Գայ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի

N 2 ՈՐՈՇՄԱՆ

ՑԱՆԿ

2017թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության

Ազգային ժողովի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին,

կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք

| Հ/Հ | Դահլիճի, շինության, անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գայի միջն. դպրոց | Խաչատրյան 2 | 60 | Աշխ. օրերին՝ ժամը 16:00-ից մինչև 19:00: Շաբաթ, կիրակի ժամը 12:00-ից 18:00: | տնօրեն Հ. Հարությունյան | - |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի երրորդ մասով,140-րդ հոդվածի առաջին մասով.

Որոշում եմ՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքա-պետարանի աշխատակազմի 2017 թվականի ժամանակացույցը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 17թ. փետրվարի 6-ին
գ.Գայ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի

ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | ԱԱՀ | ՊԱՇՏՈՆԸ | ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | Մարկոսյան Մեյրան Քոչիկի | Գայ համայնքի ղեկավար | Ապրիլ |
| 2 | Քոչարյան Խուրշուդ Աղվանի | Համայնքի ղեկավարի օգնական | Հուլիս |
| 3 | Թադևոսյան Աննա Կառլենի | Աշխատակազմի քարտուղար | Սեպտեմբեր |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ
18 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04

### ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով,<<Տեղական  ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի  32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով,<<Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>Հայաստանի  Հանրապետության օրենքով.

Որոշում  եմ.

1.Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Խաչատրյան-12 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Արամ Արտյոմի Մինասյանի `ծնված03.12.1985թ.,գույքային իրավունքները`ճանաչելով նրա սեծականության իրավունքը օրինական0.226հա հողամասի և այդ հողամասի վրա կառուցվածբնակելի տան և բնակելի նշանակությկանօժանդակ շենք- շինությունների նկատմամբ`բնակելի տուն-265.3քմ կառուցված1971թ,թոնրատուն-17.9քմ կիառուցված1971թ,կաթսայատուն-4.5 քմ կառուցված1971թ,պարիսպ-3.0քմ կառուցված1971թ:Բնակելի տունը բավարարում է <<Համայնքների վարչական տարախքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանվածանհատականբնակելի տների կարգավիճակի մասին  >> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները:Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսվածհողերի ցանկում:Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի ,չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձիկողմից:

3.Առաջարկել ՀՀԿԱԱԳԿՊԿ համապատասխանմարզային ստորաբաժանմանը գրանցել Արամ Արտյոմի Մինասյանի `ծնվ.03.12.1985թ.,սեփականության իրավունքը սույն որոշման1-ին կետում:

4.Բնակելի տանը տրամադրել Խաչատրյան 12 հասցեն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 17թ. փետրվարի 6-ին
գ.Գայ

ՔԱՂՎԱԾՔ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն Ի Ց
09 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 01

## ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով և հիմք ընդունելով Անդրանիկ Ղահրամանյանի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը.

Կարգադրում եմ .

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի սպորտային մարզիչ Անդրանիկ Սահակի Ղահրամանյանին 2017 թվականի հունվարի 9-ից ազատել աշխատանքից՝լուծելով նրա հետ կնքված 2009 թվականի մայիսի 4-ի թիվ 20 աշխատանքային պայմանագիրը:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Իսկականի հետ ճիշտ է:

Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա. Թաղնոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն
30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 02

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի երրորդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <ա> և<բ> պարբերությունների և 22-րդ կետի պահանջներով՝

КԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի կարիքների համար Գայ համայնքի կենցաղային աղբահանության ծառայությունների գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին, իսկ գնումների համակարգող՝ Գայանե Հակոբյանին:

2..Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին ՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 17թ. փետրվարի 6-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն
31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <գ> պարբերությամբ, 29-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված Գայ համայնքի կենցաղային աղբահանության ծառայությունների ձեռք բերման հայտը.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել <ԱՄԳՀ-ՊԸԾՁԲ-17/01>Պարզեցված ընթացակարգ (ՊԸ) գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Խուրշուդ Քոչարյան (Գայ համայնքի ղեկավարի տեղակալ)

Հանձնաժողովի անդամներ՝ Արամ Մինասյան (Գայ համայնքի ավագանու անդամ)

Տաթևիկ Հարությունյան (Գայի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ)

2. <ԱՄԳՀ-ՊԸԾՁԲ-17/01> Պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Գայանե Հակոբյանին:

3.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին `հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017 թ. փետրվարի 6-ին
գ.Գայ